

Արեւելեան

Պատոյ

Արեւելեան Փող կը հրատարակուի ամեն օր :

Տարեկան գինն է Պոլսոյ համար կանխիկ 1 Օսմանեան սակի . իսկ գաւառացի համար բութայի ծախքը մեր վրայ ըլլալով 7 արծաթ մէճիտ :

Մէկ օրինակը 10 փարայ է :

Մանուցմանց տողն առաջին անգամի համար 2 զրշ . երկրորդ անգամի համար 1 զրշ . և ուրիշ անգամներու համար մասնաւոր սակարկութիւն կը լինի :

Որ եւ է դրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէն-Խմբագիրն Կ. Պօլսոյ Քիւրքէի խանի վարի յարկ թիւ 26 Արեւելեան Փողոյ տպագրատունը :

Ա. ՏԱՐԻ

1873 ՄԱՅԻՍ 12 ՇԱԲԱԹ

ԹԻԻ 20

Ա.ԶԳ.Ա.ՅԻՆ

Համամեծեան Սարգիս ազգայի մարտել ուղարձ 1500 լիբրայի խնդրոյն համար այսօր ժամը 7ին Ոստիկանութեան գատական ատենին պիտի ներկայանանք , ուր Համամեծեանի կողմանէ փոխանորդութեան պաշտան պիտի վարէ Օգոսէն Խօճասարեան՝ փաստաբաններուն ողորմելին : Բայց սրտիկեան քրննութեան ենթարկելի խնդիրը ազգային կրօնի մը խնդիր է , պիտի խնդրենք կառավարութեան սր հրատարակաւ լինի դատան , որպէս զի պատուարժան հատարակութիւնը Օգոսէնի՝ ի վրաս ազգային շահաց ընելիք փաստաբանութեան ունկնդիր գտնուի :

Այս առաւօտ առեւտրական գործոց արշաճանատունը բրթեմթ ըրինք , և անտարակոյս դատը վատակելէ ետեւ պէտք եղած տեսութիւնը պիտի ընեմք Համամեծեանի հետ :

... Խմբագիր .

Լրագրոց ոմանց մէջ ս'ընուազ զորմանօք կարգացինք՝ Սեբաստիոյ Ս. Նըշան վանուց միարան կարպետ վարդապետի Եւզոկիոյ Ս. Յովակիմ Աննայի վանուց վանահայր կարգուիլն վանօրէից խորհրդոյ ընտրութեամբն :

Առաջին անգամ չուղեցինք հաւատալ այս լրոյն , վասն զի չէինք յուսար որ Սահմանադրական վարչութիւն մի գաւառին ընտրութեան իրաւունքը գաւառացոյն ձեռքէն յախտակելով իրեն սեփականէ , և հետեւապէս ինքքն ընելով պէտք եղած ընտրութիւնը , Սահմանադրութեան հակառակ

գիրքի մը մէջ գտնուի :

Բայց սրտիկեան ստուգեցինք յետոյ թէ այդ ընտրութիւնը ըրած է արդարեւ վանօրէից խորհուրդն և Ազգ. վարչութիւնն ալ վաւերացուցած , փութացինք անմիջապէս բողոքել վարչութեան և չընդունիլ նոյն ընտրութիւնը , և չպիտի ալ ընդունիմք ընտրվարապետ վարդապետ , վասն զի արդէն կը ճանչնամք մեք զայն , և անհարելի է նմա վանահայր լինիլ մեր վանուց :

... Խմբագիր , կը խնդրենք որ յանուն իրաւանց բարեհաճիք զօյս Չեր պատուական լրագրոյն մէջ զետեղել , որով երախտադարտ կը թողուք զվեղ :

Մնամք են

Պօլսոյ Կարօնայ Եւզոկիոյ
(Բաղնիկ-սորաբն-Յիւնի)

Ասիկա առաջ կըր Ղալաթիոյ Պրոպագանդիկ միարայ խօսեցանք , ըսինք թէ՛ հանդիմող ամեն ախտածէսք բըժրչիւսելէ գաւ բարձու ալ կը համնին , և իրաւունք ալ ունէինք , վասն զի յիշեալ կարպետ վարդապետը որ Անգրիանու պոլսոյ մէջ հիւանդութեան բընուած և Ղալաթիոյ Պրոպագանդիկ միարայէր , բժշկուելէ ետեւ ծայրագոյն իշխանութեան ալ հասած էր :

Ուստի զարմանք չէ՛ եթէ այսպիսի անպիտան վարդապետ մի այսօր ալ Եւզոկիոյ Ս. Յովակիմ Աննա վանուց վանահայր կարգուի , վասն զի Ղալաթիոյ չուրը անանկ կը վերցնէ , և դուցէ որ մ'ալ վանքէն Եւզոկիոյ Ս. Աստուածածնայ եկեղեցոյն կից տունը կը գայ , և հան կը փառաւորուի առաջնորդական պաշտօնով :

Ասոնք չըլլալու բաներ են , քանի որ Ղալաթիոյ Պրոպագանդիկն կայ :

Հետեւեալ նամակը զրկուած է մեզ , զոր ամենայն անկողմնակալութեամբ կը հրատարակեմք .

... Խմբագիր .

Մամուլ 28րդ թուոյն մէջ Սամաթիոյ խնդրոյն նկատմամբ Սամաթիա և Պ. Օգոսէն վերնադրով յօգուած մը հրատարակուած էր . այն յօդուածին մէջ մեծ մաս մը ճշմարիտ և անկողմնակալ գիտողութեանց հետ մէկ երկուսխալներ կային , որք տրուած սխալ անդեկութեանց արդիւնք են անշուշտ , և զորս կը փութամ ներկայիւս նշանակել և առ Չեղ ուղղել ի հրատարակութիւն՝ յօգուտ Սամաթիոյ :

Օգոսէն էֆէնտի՝ ինչպէս ըսած է Մամուլ արդարեւ ամեն ինչ գործած և իր հեղինակութեանց մէջ այն է մինչքուտարկութեան խանգարումը ըստ ամենայնի յաջողած է : Սակայն Օգոսէն էֆէնտի այս ամենուն մէջ միակ չէր գործէր , թող խորհրդոյ մնացեալ անդամներն ալ եթէ ճշմարիտը պիտի ըսենք թեւ թիկունք եղած էին իրեն . և Օգոսէն ինչպէս կրնար իբ մեքնայութիւններն անարգել քաշեցընել , եթէ թող խորհրդոյ ամբողջութիւնը կամ դէթ մեծագոյն մասը իրեն համախոհ ա գործակից չ'ունենար :

Ճողովուրդը տեսաւ որ Սամաթիոյ պատիւը , վարկն ու օգուտը Օգոսէնի և անոր պաշտօնակցաց ձեռք խաղալիկ եղած էին և Սամաթիա երթալով աւերակ կը դառնար , սթափեցաւ իր երկար ժամանակեայ անտարբերութեւն

նէն եւ անոնց դէմ ֆաղ ժողովոյ բողոքեց, ֆաղ ժողովն կարեւորութիւն չը տուաւ այս բողոքին, և Սամաթիոյ Ընտրողական ժողովոյ անդամ կրճիկեան էֆէնտի այն ատեն ֆաղ ժողովոյ մէկ մասին քաղաքականութեանը վստահացած՝ մինչեւ իսկ յանդգնեցաւ ժողովուրդն հրապարակաւ անարգել, որոյ արդիւնքն եղաւ քուէարկութեան խանգարումը:

Ինչպէս որ կը տեսնուի՝ քուէարկութեան խանգարումը կրճիկեանի զփուղովուրդն անարգելէն յառաջ եկած իրողութիւն մ'է, թէ և հաւանակաւնութենէ հեռի չէ Օգոստի այս մասին անուղղակի գեր մը կատարած ըլլալը:

Սամաթիոյ խնդրոյն մէջ ցաւալի կէտ մ'ալ քուէարկութեան խանգարումը Օգոստի և անոր ընկերակցաց դէմ բողոքող ու Սամաթիոյ օգուտը պաշտպանող ժողովուրդեան վրայ մնայն է, Սակայն Օգոստի էֆէնտի որ ամեն բանի մէջ յաջողած էր, չը կրցաւ այս շարժումը իր շահուն ծառայեցնելու յաջողիլ, վասն զի գործողներն ոչ թէ Օգոստի արբանեակերն այլ Սամաթիոյ ճշմարիտ բարեկամներն էին:

Ասանք, որք թաղին պատիւն ու օգուտը պաշտպանելու համար թաղ խորհրդոյ դէմ բողոքած և զայն ամբաստանած են, որոյմէ մին ալ ետեմ, երբէք Օգոստի կամ թաղ խորհրդոյ անդամնց մէկուն գործիք չեղան և չը պիտի ըլլան, և մինչեւ որ Օգոստի կրճիկեան կամ պարզը ըսելով թաղ խորհուրդը իր արժանաւոր պատիժը չը կրէ, իրենց դատէն ետ չը պիտի կենան, իհաստատութիւն այսմ թաղ խորհրդոյ դէմ տուած ամբաստանագրոյն օրինակը ներփակեալ Ձեզ կ'ուղղեմ, և արդէն նոյն իմաստով 16ի չափ ստորագրութեամբ ուրիշ ամբաստանագիր մ'ալ տրուած է, զորս ֆաղ ժողովը ցարդ զլացած է քննութեան ենթարկել:

Սրբ ինչպէս յայտնի կերելի թաղ խորհրդոյ դէմ բողոքողներն այսինքն ըստ ֆաղ ժողովոյ քուէառուփ կտորող ու խորհրդարան փակողներն ոչ թէ Օգոստի թերաբեաններն, ինչպէս որ Մամաթի հրատարակած յօդուածին մէջ ըսուած է, այլ անոր ու թաղ խորհրդոյ դատախազներն են:

Նոյն յօդուածին վերջին մասը խիստ ճշմարիտ է. Օգոստի էֆէնտի քուէարկութեան խանգարումէն վերջը եթէ կէտի մը մէջ յաջողած է՝ այն ալ ֆաղ ժողովոյ ազդեցութեան տէր մէկ քաւին անդամներն իրեն կողմն ունենալով

մինչ աստիճան մը Սամաթիոյ խնդիրն ի նպատակ իրեն լուծել և մինչեւ իսկ խորհրդոյ դէմ եղած նենգութեան ամբաստանութիւններն ցարդ անլուծի լինել տան է. սակայն ի զոր. Սամաթիոյ խաղաղութ. համար թաղ խորհրդոյ դէմ եղած ամբաստանութիւններն անաչառ քննութեան մը յանձնուելու են, ասանց սրոյ Սամաթիոյ երկար վէճերով ու ցաւալի երկպառակութեամբ բոլորովին աւերակ պիտի գառնայ, որուն համար Ազգ. վարչութեան ուղղութիւնը կը հրաւիրեմ:

... Խմբագիր՝ ներկայս յօդուած Սամաթիոյ Ձեր յառաջիկայ թիւով հրատարակելիք խնդրելով Մեծ Սամաթիոյ թաղ խորհուրդն ամբաստանող և քննիչ մասնաժողովոյ դէմ բողոքողներէն 73 մայիս 11 Պ. ՄԿՐՏԻՉԵԱՆ Սամաթիոյ

ՊԱՏՃԷՆ ԱՄԲԱՍՏԱՆԱԳՐՈՅ

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր:

Նախագահ Ազգ. կեդր. վարչութեան

Սամաթիոյ խնդիրը քննելու և քնննութեան արդեանց համեմատ պարտ ու պատշաճն անօրինակ համար ֆաղ ժողովոյ կողմնէ քննիչ Մասնաժողով մը ընտրուած և Սամաթիոյ թաղ խորհուրդն ամէն տեսակ յուղմանց եւ դժտութեանց մէջ շարժառիթ և պարագլու իս հանդիսացած ըլլալուն համար զանի կ'ամբաստանեմ, որ է՝ քարոզչական արարողան, նենգող, գրգռել, զրոյստել և պատուոյ զգարում չ'ունեցող:

Սոյն գլխաւոր ամբաստանութիւններն հաստատած ժամանակ ըստ Մահմանադրութեան թաղ խորհրդոյ դատապարտութիւնը իսկ չը կրցած հաստատած ժամանակ իմ դատապարտութիւնս կը պահանջեմ. և ասկէ ուրիշ կերպով երբէք չը պիտի դադարիմ զանի ամբաստանելէ և բողոքելէ ուր որ ալ պէտք ըլլայ:

Սրբազան Հայր սոյն ամբաստանադրոյս մէկ օրինակը քննիչ մասնաժողովոյ հաղորդելիք խնդրելով:

Մեծ Ձերդ բարձր Սրբազանութեան ամենախնարհ ծառայ 1873 Փետր. 15 Պ. ՄԿՐՏԻՉԵԱՆ Սամաթիոյ

Յաւալի է որ մինչեւ այսպիսի ամբաստանութիւնը կը լինին թաղ խորհրդոյ դէմ Ազգ. վարչութիւնը աւանց կարեւորութիւն տալու ամբաստանող կողմին երեւան բերած ճշմար-

տութեանց, խնդիրը ի նպատակ Օգոստի կամ այլոց ունաց լուծած լինելու համար կ'առտանէ Սամաթիոյ օգուտն ու շահը, որոյ պաշտպան նպէս էր կանգնիլ ամենայն անկողմնապահութեամբ:

Ուրախութեամբ սրտի կը լսեմք թէ Տիգրան էֆէնտի Սինանեան Ռօտութիւն կողմէ երեսփոխան ընտրուած է:

Փափաքելի է որ գաւառացի ազգայինք՝ այս կամ այն ազդեցութեան ներքեւ փոխանակ խել մ'անպիտան երեսփոխանաց աթոռ տալու Ընդհ. ժողովոյ մէջ, Սինանեան էֆէնտի նըման ողջամիտ անձանց տայ իւր քուէն և իւր իրաւունքը պաշտպանելու նուիրական պաշտօնը:

ՆԵՐՔԻՆ

Կայսերական հրամանաւ.

Ռոտիկանութեան պաշտօնեայ իղգէտ բաշայ, Պետական խորհրդոյ անդամ.

Եճմէնի ընդհանուր կառավարիչ Բեուֆ բաշայ, Ռոտիկանութեան պաշտօնեայ անուանեցան:

— Կայսերական թիկնապահաց խորհրդոյն նախագահ Ահմէտ Էյուպ բաշայ, Եճմէնի ընդհանուր կառավարիչ և Եօթնբորդ զորաբանակին հրամանատար անուանուելով՝ այս առթիւ միւշիւրութեան աստիճան բարձրացաւ:

— Ձորեքչարթի օր բարձր խաւիք, իւր առաջին թարգմանն եղող վսեմ Արախամ պէյի հետ նորէն կայսերական պալատը երթալով՝ վեհ. Սուլթանէն սիրալիք կերպով ընդունուեցաւ:

— Պատրիարքի ըսածին նայելով Բարձր խալիֆին հետ եկեր են, իւր որդին Հիւսէյին բաշայ, փեսան Մանսուր բաշայ, և թաղամ, Բիտղ և խայրի բաշաները: Խալիք երկու ամիսի չափ հաս պիտի կենայ եղեր:

— Քաղաքի խանին լիազոր գործակատար խաղապ պէյ, կերակի օր, այցելութիւն մը տալով Բարձր Շէխիւլամին, Միտհաթ փաշային և Պետական խորհրդոյ նախագահ վսեմ Բեհամիլ բաշային, խիստ սիրալիք ընդունուելով ին գտեր է անոնցմէ:

— Ծովային գործոց պաշտօնեայ Բիղա բաշայ, այս երեքչարթի պալատը կանչուելով՝ վեհ. Սուլթանին հետ տեսակցելու պատիւն ունեցաւ և իւր պաշտօնին վերաբերեալ ինչ ինչ գոր-

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՓՈՂ

ճոյ վրայօք հրամաններ տրուեցաւ իրեն :

— Կրտուի թէ իկնաթիէֆ զօրապետը ամսէ մը պիտի մեկնի ընտանեացը հետ , իւր Ռուսիոյ մէջ օւնեցած կալուածներն աչքէ անցնելու համար :

— Ձինուորական օրագրին ըսածին նայելով , վեհ : Սուլթանին՝ Ալեմ-Տաղիի գղեկը դացած ատեն իրեն ուղեկից եղող պաշտօնակալը Նորին . վեհափառութեան առատածեւունութեան մէկ նոր փորձն ալ առեր են : Որովհետեւ 1118 օսմանեան ոսկի պարգեւ տրուեր է իրենց :

— Մայիս 11 ին վիէննայի արքունիքը եղած մեծ ընդունելութեան ներկայ գտնուեր են տերութեան բարձրաստիճան անձինք , պաշտօնեայք , պատգամաւորաց ժողովներուն անդամք և Արուեստահանդիսին համար կազմուած բոլոր , յանձնաժողովներուն անդամք : Այս վերջիններէն Օսմանեան դեսպանին միջոցաւ կայսեր և կայսրուհւոյն ներկայացած են Օսմանեան յանձնաժողովոյն անդամ Համիտի պէյ և եգիպտոսի ու թունուզի յանձնաժողովոյն անդամ եղող Պ. Պրիւկչ ու Պ. Մօրբուկօ ար Նիւմա :

— Մինչեւ հիմայ Բ. Գուռը շարաբաթը երկու օր . ուրբաթ և կիրակի գոյ կըլլար : Այս սովորութիւնը վերցուած լինելով , ասկից վերջը միայն ուրբաթ օր գոյ պիտի մնայ և կիրակի օրերը բաց ըլլալով բոլոր քրիստոնեայ և տաճիկ գործակալք պարտաւոր պիտի ըլլան հոն գտնուելու :

— Կրէկիի ամխահանքներու տեսուչ Հիւսէյին պէյ՝ նաւարանին շինութեանց մասնաժողովոյն անդամ , և Հասան պէյ ալ Կրէկիի ամխահանքերու տեսուչ անուանեցան :

— Անդրիանուպօլսոյ կուսակալ , Մուսլիս բաշայ չորեքշաբթի օր քաղաքս հասաւ :

— Եանեայի նորնտիր կուսակալ Իսմայիլ բաշայ , երկուշաբթի օր Սպարապետի գուռը երթալով Բարձր Եռսուֆ իզպէտանին էֆէնտի իշխանէն ընդունուեցաւ :

— Մէրսիկի , Բրեզդէնտի և Եանեայի նորնտիր կուսակալք Աքիֆ Հիւսնի և Իսմայիլ բաշաները երէկ մայրաքաղաքէս մեկնեցան իրենց պաշտօնատեղին երթալու համար :

— Քաշկարի գետաբան Եագուպ խանը այս անգամ Մեծ-Եղարքոսին այցելութիւն ըրած ատեն Էյուպի թէքէկէն շէխն եղող Մէհմէտ էֆէնտի ընկերացած էր :

— Այս չորեքշաբթի , Բարձր ճէլալէտտին էֆէնտի իշխանը իւր յատուկ նաւակով պոտյա մը ըրաւ կայսերական նաւարանին մէջ :

— Կիմանանք , կրսէ Լա թիւրքի , թէ Խտալոյ թագաւորը խիստ ընտիր տեսակէն 400 կով ընծայ բրեր է վեհ : Սուլթանին , որք կայսերական ագարակներն խրկուեր են :

— Ըսած էինք թէ Բարատիս չոգենաւը Ծովային գործոց պաշտօնատունէն դնուեցաւ : Կրտուի թէ այս նաւուն 600 օսմանեան սոկի տրուած է :

— Ծովային գործոց պաշտօնատունը միտք ունի եղեր ծովային զօրաց համար ատրճանակներու շինութիւնն յանձնարարել Եւրոպոյ :

— Ազիզիէի վարչութեան՝ կայսերական հրամանաւ՝ ծովային գործոց պաշտօնատան յանձնուելէն ի վեր , առանձին գրասենեակ մը հաստատուած է բարձր պաշտօնակալի մը տեսչութեան տակ , որուն պաշտօնն է նախկին վարչութեան հաշիւները ճշդել և ինչ վիճակի մէջ գտնուին հաստատելու :

— Լա թիւրքիի առած տեղեկութեանց նայելով ծովային զօրաց ֆէտերը փոխուելով՝ ասկից վերջը թունուզի ֆէս պիտի դնեն եղեր :

— Ժուրնալ տէ թուալօ Բիւպլիգտը Լամբիր Օթօման օրագրին առաջին թիւը չորեքշաբթի օր ելաւ : Այս օրագրին տէր և անօրէնը Պ. Էօթէն Տառնօրտ , խմբագիրն ալ Պ. Ալֆրէտ տը Գասթօնն է :

— Չէրքէզ մը Չէրքէզխտանէն ընդունած մէկ նամակին պարունակութիւնը հայտնուած է ճէրիտէի հալաւտիս լրագրին . այս նամակին նայելով՝ կայսերական կառավարութիւնը յայտնած է եղեր Չէրքէզ պատգամաւորաց , որք կայսրութեան երկիրները գաղթելու հրաման ընդունելու համար խրկուած էին իրենց հայրենակցաց կողմէն , թէ պատրաստ է իր երկրին մէջ տեղ տալ հոն ապաստանելու համար եկող թշուառներուն : Այս նամակը կը յաւելու թէ Չէրքէզներու գաղթականութիւնը արդիւնէրու համար Ռուսիացի գործակալք ամէն հնարք կընեն մերթ անոնց ըսելով թէ օսմանեան կառավարութիւնը զիրենք չի պիտի ընդունի . և մերթ եւս բացարձակապէս գաղթականութիւնն արդիւնէրով : Քոանի չափ անձինք , որք այս խորաման մէջ մեծ դեր մը խաղացած ըլլալու յանցանք ամբաստանուած էին , անցեալ օրեր Սիպերիա խրկուեր են եղեր :

— Կը հաւատան , կըսէ , Նեոլոդոս լրագիրը թէ կայսերական կառավարութիւնը իմանալով որ չարախորհուրդ անձինք լուր տարած եր են Երուզէմի մէջ թէ նախորդ Կիւրեղ Պատրիարքը նորէն Երուսաղէմի Պատրիարք պիտի ըլլայ , Երուսաղէմի կառավարիչ Նազիֆ բաշային հեռագրած է թէ այս զրոյցներն անհիմն են և թէ Բ. Գուռը Գեր. Պրիւպիտսը միայն Երուսաղէմի Պատրիարք կը ճանչնայ . ուստի Նազիֆ բաշայ հրաման ընդունած է այս զրոյցներն իրբեւ անհիմն արդիւնէրու :

Հ Ե Ռ Ա Գ Ր Ա Լ ՈՒ Ր Ք

ԱՌՍՏՐԻԱ-ՀՈՒՆԳԱՐԻԱ

Վիէննա 21 մայիս

Գերմանական հրապարակներուն անապահալ լուրերուն վրայ սօստային մէջ թուլութիւն մը կար բացուած ատեն : Սակայն կը հաստատուեն թէ գոցուած ատեն վիճակը բարւոքեր է :

Կայսրը ամէն օր Արուեստահանդէսը այցելութիւն կընէ :

Ռօչէր կարդինալը յորդորագրով մը հաւատացեալները կը հրաւիրէ Սահմանադրական օրէնքներն ընդունելու և ուղղակի ընտրութեանց մասնակցելու :

Վիէննա 22 մայիս

Օտար տէրութեանց երկիրները գտնուող բոլոր Աւստրո-Հունգարական հիւպատոսները՝ Արուեստահանդէսին այցելութեան երթալու համար բացակայութեան հրաման ստացան :

Զ Ո Ւ Ի Յ Յ Ե Ր Ի Ա

Երբէք 21 մայիս

Եւրոպոյ հիւսիսային կողմը Հնգկաստանի միացնելու համար , Ռուսաստանի մէջ տեղէն երկաթուղի մը շինելու նկատմամբ Պ. տը Լէսէբսի՝ իկնաթիէֆ զօրապետին ուղղած նամակը կը հրատարակէ Ժուռնալ տը Ժինէվլրագիրը :

Ի Տ Ա Լ Ի Ա

Հուլի 21 մայիս

Ճիզվիթները արտաքսելու վերաբերեալ առաջադրութեան գէմ կեցաւ պաշտօնէութիւնը և 187 քուէի դէմ 179 քուէով մերժեց զայն :

Պապին բոլոր մարմինը անդամալյծ եղած է :

Հուլ 22 մայիս

Կրօնական միաբանութեանց վերա-

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՓՈՂ

բերեալ օրինաց ծրագրին չորրորդ-
յօգուածը ընդունուեցաւ խորհրդարա-
նէն :

Ճենեալ 22 մայիս

կղերին հակառակ ցոյցերն խաբան-
ուեցան :

Գ Ա Ղ Ի Ա

Բարեւ 22 մայիս

Պորսային վիճակը բաւական հաս-
տատուն է :

Պ. Մարթէլ 323 քուէի դէմ 330
քուէով Ազգային ժողովոյն փոխ-նա-
խագահ անուանեցաւ :

Ռ Ո Ի Մ Ա Ն Ի Ա

Պոտեւ 22 մայիս

Ռումանիոյ իշխանին գահակալու-
թեան տարեդարձի հանդէսը շքեղ
կերպով կատարուեցաւ :

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Պերեմ 22 մայիս

Մանուցումովն հակառակ կայսրը
յունիս ամսուն Արուեստահանդէս պի-
տի երթայ :

Յ Ո Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Արեւ 21 մայիս

140 երեսփոխանք արդէն հասած
են . դեռ եւս կապառուի որ ուրիշներ
ալ կան խորհրդարանին գործոց մաս-
նակցելու համար :

Լորիումի բաժնէտոմսեր կը փնտրու-
ուին 95 ֆրանքի :

Քիսթոթիքի . . . 42 տրախմի :

Հեռագրական գծերը երկուշաբթի
օրէն ի վեր է որ չեն բանիր : Գան-
դատ կըլլայ մանաւանդ վճռի կայա-
րանին վրայ , որուն համար , կըսեն ,
թէ հեռագրալուրերը կարգելու :

21 մայիս , երեկոյ

Ծովային գործոց պաշտօնէին հրա-
ժարականն ընդունուեցաւ : Պ. Տրոստ
պիտի տալնէ այս պաշտօնը առ ժա-
մանակեայ կերպով :

Լորիումի բաժնէտոմսերը 91 Էն 96
ֆրանք կըսեն պատրաստ դրամով : Ար-
քանկելախններն ալ 113 :

Թագաւորը թաթայ գնաց :

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

Օսմ . ոսկին 100 դր. ի հաշուով

Ղր. Փոյ .

Անդր . ոսկի 110 52

Գաղ 87 20

Table with 2 columns: Item name and Price. Items include Բօլ, Քրքմից, Ճերմակ մէճիտ տարբ, etc.

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՑ

Ղալաթիա 11 մայիս

Table with 2 columns: Item name and Price. Items include Ընդհ. Պարտ. Արժ. բաց, Պօսիթէ Ժէնէրալ, etc.

Վ Ր Ի Պ Ա Կ

Լրագրոյս 18 և 19րդ թիւերուն մի-
ջոցաւ հրատարակուած Երզնկայի շա-
րունակելի նամակին ամսաթիւը փոխա-
նակ Ապրիլ 22 ըլլալու Մարտ 22 ե-
ղած է :

Ա Ջ Գ

Վաղը 13 Մայիս Ղալաթիոյ կիրա-
կօրեայ վարժարանը սովորական ուս-
մանց դասերէն ի վատ , Մեծ. Գրիգոր
Էֆէնտի ճէսահեանց պիտի դատախօ-
սէ գինիի , թէյի , շիքօթի , սուրճի
եւայլն եւայլն առողջարանութեանց
վրայ ժամ ճիշդ 6 , նոյնպէս Մեծ. Գե-
որգ Էֆէնտի իսթիմարաճեան երկրա-
գործութեան կենցաղօգուտ գիտու-
թեան վրայ ժամ 7 . ուղիւ կուզէ կըր-
նայ ներկայ գտնուիլ :

Ա Ջ Գ

Արեւելեան փող ձեռքէ ծախուելէ
զատ կը ծախուի նաև Պահճէ - քափու
Սուճի Մ. Պողոս աղայի խանութը , կա-
մըրջի գլխի պարագան , Պէշիկթաշի ,
Օրթագլիղի , Գուրուչէշմէի , Բ. Հիսա-
րի , Պէյգօղի , Մաքըրղիղի , Գընալը

կղզիի տեղական թղթատարութեան
կայանները :

Շէրիֆ-փաշա խան միջին յարկ 5
թիւ սենեակը Գաղղիերէնի , Հայերէ-
նի , Տաճկերէնի և թուաբանութեան
դասատուութիւն կ'ըլլայ : Յաճախորդ-
սոյն երեք ընդուաց թէ՛ աշխարհիկ և
թէ՛ գրական կիրառութեանցը մէջ ա-
մենայն կերպով գոհ ըլլալին փորձով
պիտի տեսնեն :

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՌՆ ԵՒ ԿՆՈՉ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀՐԷՇՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

ԳԱՐԲՈՂ ԳՐԱՍԵՐԵԱ

Այս գիրքը՝ որ մարդկային սեռի
հրէշութեանց վրայ հետաքրքրական
տեղեկութիւններ կը պարունակէ , սգ-
դարեւ արժանի է ամեն կարգի մար-
դոց ընթերցանութեան :

Կը ծախուի Գաֆաֆեան գրատու-
նը և բոլոր հայ գրաւաճառաց քով ,
կամարջին գրուսը Պ. Մատթէոսեանի
պարագան , իւսկիւտարու Յէլամիէի
ճատտէն Չէօնիէկիճիեան Ստեփան ա-
ղայի դեղարանը :

Գին 12 դր :

Իջագլուղի աղգային Լսարանին մէջ
Մեծապատիւ Տօքթօր Շիշմանեանի
և Եռուֆեան Մեծապատիւ Տիգրան
Էֆէնտի ըրած սրտաշարժ և ազու-
ատենախօսութիւնքն հրատարակուած
լինելով , կը ծախուին բոլոր գրաւաճա-
ռաց քով ի գին 40 վարայ :

ԱՇՆԱՆ ՏԵՐԵՒՆԵՐ

ԿԱՍ

ԳԱՂՏՆԻՔ

ԵՐԻՏԱՍԱՐԳԱՅ

Գ. Պաղտատարեան Էֆ. ի աշխատա-
սիրութեամբ ի լայն ընծայուած ուսն
տեսըն՝ որ Պօլսոյ բոլոր Հայ գրաւա-
ճառաց քով կը գտնուի , արժանի է
արդի երիտասարդաց ընթերցանու-
թեանն , որք ազիտարար կը մաշեն ի-
րենց կեանքն ու առողջութիւնը :

ՏԻՐ ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ

ԿԷՐՁԻՆԿԱՆԵԱՆ ԲԱՐՔՈՂ ՍՈՒՐ

ՏՊԱՐԳ. Յ. ԳԱՅԱՅԵԱՆ ԵՒ ԸՆԿ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ
Կ Պօլսոյ իրարեք խան ջարի յարկ թիւ 26